

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆ. (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

11.07.2023 15:45



Այսօր՝ հուլիսի 11-ին մեկնարկեց փաստաբանների բողոքի հերթական ակցիան:

Փաստաբանները երթ իրականացրին դեպի Ներքին գործերի նախարարություն՝ Ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանի հրաժարականի պահանջով, ինչպես նաև վերջինիս հանձնելու «Փաստաբանության թշնամի» հավաստագիրը:

Իրականացվող ակցիայի արդյունքում տեղի ունեցավ հանդիպում փաստաբանների պալատի և ՆԳՆ նախարարության ներկայացուցիչների միջև:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ղեկավար Արա Զոհրաբյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը, Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանը, ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ, Վաղինակ Մարտիրոսյանը:

Կողմերը արձանագրեցին իրենց մտահոգությունը ստեղծված իրավիճակի կապակցությամբ և որոշեցին հանդես գալ համատեղ **հայտարարությամբ**:

Նշենք նաև, որ ՀՀ փաստաբանների պալատում այսօր, ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում (ք.Երևան, Զաքյան 7-2) իրավիճակ է հերթական ակումբի նիստ որտեղ քննարկվելու են իրականացված ակցիաների արդյունքները և հետագա գործողությունները:







Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })